Տեղեկատվական թերթիկ

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office South Caucasus

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալության Հարավային Կովկասի գրասենյակ

Նոյեմբեր 2016թ.

Մաղրու տարածաշրջանում գյուղական համայնքների զարգացում Փուլ II

Տվյալներ

Երկիրը. Հայաստան

Տևողությունը. Դեկտեմբեր 2012թ. – դեկտեմբեր 2016թ.

Բյուջե. 3‘580‘000 շվեյցարական ֆրանկ

Ծրագրի գործընկերները.

- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն (ՏԿԶՆ)
- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
- Սյունիքի մարզպետարան
- Իրականացնող գործընկեր.«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD)
- HELVETAS շվեյցարական ինկորպորացիա

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է փոքրածավալ այգեգործ արտադրողների ավելացած և կայուն եկամուտը՝ արտադրության առավել շահութաբերության և շուկայի առավել հասանելիության ապահովման միջոցով:

Հիմնավորում

Գյուղատնտեսությունը աշխատատեղերի հաշվով Հայաստանի տնտեսության ամենամեծ հատվածն է, որն ապահովում է երկրի բնակչության 37%-ի զբաղվածությունը: Այս հատվածը կարևորագույն դեր ունի երկրի տնտեսության մեջ՝ 2015թ. տվյալներով հաշվարկելով ՀՆԱ-ի մոտ 22%: Միևնույն ժամանակ հայ ֆերմերները կազմում են բնակչության առավել խոցելի խումբը, որի մոտ 40%-ն ապրում է աղքատության մեջ: Փոքր և մասնատված ֆերմերային տնտեսությունները մեծ տեղ են զբաղեցնում գյուղատնտեսական արտադրության ոլորտում, ինչը բացասաբար է ազդում արտադրության քանակի ու որակի վրա, հետևաբար նաև սահմանափակում է շուկայական հնարավորությունները: Գյուղատնտեսության երկու հիմնական խնդիրներն են ցածր արդյունավետությունը և շուկայի սահմանափակ հասանելիությունը:

Մեղրու տարածաշրջանում գործազրկության մակարդակը կազմում է 15%: Բնակչության մեծամասնությունը ներգրավված է սեփական սպառման գյուղատնտեսական աշխատանքներում: Մեղրու բնակչության 30%-ից ավելիի համար այգեգործությունը հանդիսանում է եկամուտի հինական աղբյուր:

Գործողություններ

Ծրագիրը հիմնականում աշխատում է այգեգործ արտադրողների և շուկայի այլ դերակատարների կարողությունների զարգացման ուղղությամբ: Այն նաև միտված է ամրապնդելու շուկայի դերակատարների միջև գոյություն ունեցող կապերը՝ նպաստելով համապատասխան ծառայությունների և շուկայի վերաբերալ տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացմանը: Ավելին, ծրագիրն աշխատում է շուկայի բոլոր դերակատարների հետ, մասնավորապես՝ մատակարարների, ծառայություն մատուցողների, միջնորդների, վերամշակողների, սուպերմարկետների և բոլոր մակարդակների իշխանությունների հետ: Նման աշխատանքը առաջ է բերում փոփոխություններ այգեգործության արժեշղթայում՝ ի նպաստ Մեղրու տարածաշրջանի աղքատ ֆերմերների. դեպի ներքև՝ արժեշղթաներում խթանելու արտադրական ծավալները, դեպի վերև՝ զարգացնելու շուկայի հասանելիությունը:

Ակնկալվող արդյունքներ

Ծրագրի իրականացման այս փուլի ավարտին ակնկալվող արդյունքները հետևյալն են.

- Ծառայություն մատուցողները և մատակարարները կին և տղամարդ ֆերմերների համար ապահովում են առավել արդիական գյուղատնտեսական տեղեկատվության և նյութերի հասանելիություն:
- Ֆինանսական ծառայություն մատուցողները կին և տղամարդ ֆերմերներին, վերամշակողներին և այգեգործության շուկայում այլ մասնավոր դերակատարներին տրամադրում են ավելի շատ, առավել լավ և հարմարեցված խորհրդատվություն, ինչպես նաև ներդրման համար նախատեսված կապիտալի հասանելիություն:
- Բարելավված առևտրային կապեր ֆերմերների և գնորդների (վերամշակողներ, վաճառողներ, մանրածախ վաճառողներ, արտահանողներ) միջև, ինչը ստեղծում է առավել բարձր շուկայական գնագոյացման հնարավորություն:
- Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքապետարաններ և մարզային իշխանություններ) որդեգրում և իրականացնում են այնպիսի ռազմավարություն, որը միտված է ստեղծելու առավել բարենպաստ բիզնես միջավայր:

Կոնտակտային տվյալներ.

Զարգացման և համագործակցության
Շվեյցարիայի գործակալություն Հարավային
Կովկասի գրասենյակ
Շվեյցարիայի դեսպանատուն

Մելիք Ադամյան փողոց 2/1
Երևան 0010, Հայաստան
Հեռախոս. +374 10 52 98 60
Ֆաքս. +374 10 52 98 61

www.swisscoop.am
www.facebook.com/SwissCooperationSouthCaucasus
yerevan@eda.admin.ch